և կ'երթային այլք և կու տային սոցա անթիւ կաշառ և սոքա կու գրէին թէսքէրէ մի վէզիրին թէ Շուտով զայն երկիրն կամ զայն քաղաքն այս անուն մարդուս տո՛ւր. և վէզիր եղածն չգիտէր թէ զի՛նչ առնէր. թէ զառաջինն փոխէր՝ նա՛ վայ էր խիստ, քանզի Բ ամիս է կամ Գ ամիս է որ տվեր է նորա. և թէ չի տար՝ նա՛ գլխուն կու վախէր և կու տար յետի մարդուն։ Այսպէս և մէկն այլ կ'երթար կաշառ կու տար սոցա ևս, զնա մանզուլ կ'առնէին և զնա կու դնէին։ Եւ թէ վէզիրն չառնէր ըստ հրամանի սոցա՝ նա՛ զայն սպանանել կու տային թագաւորին եւ զմիւսն այլ կ'առնէին վէզիր որ իւրեանց հրամանօքն առնէր զամենայն գործն։ Եւ ո՛ր պէկպէրպէկիքն կ'երթային ի սահմանեալ տեղն, բազում անիրաւութիւն արարեալ կու լացուցանէին զհնազանդեալս, քանզի տվեալ են բազում դրամ, և զաչքն ի յետս ունելով՝ թէ այսօր մանզուլ կ'անեն և միոյն այլ կու տան, վասն այնորիկ անիրաւութիւն առնէին, որ աշխարհ աւերեցաւ. Եւ էին պատճառ ամենայնի սոքա։ Ո՞հ զըզուիմ ըզծրելն եւ ստրջիմ ի միտս բերելն եւ դողամ սարսափելով զձեռս յառաջ տանելն զխեղճս և զխայտառակութիւնս սոցա, զոր տեսաք աչօք մերովք։ Որ այնչափ փառաց և իշխանութեան, տէրութեան և պատուոյ, մեծութեան և զօրութեան միջի եղեալ, և ո՛վ էր կարող որ զերեսս նոցա տեսանէր կամ առանց սոցա մանսուպ և զիամէթ, փաշայութիւն և պարոնութիւն մի առնէր կամ մեծութեան հասանէր ոք, քանզի բազումք ի մեծաց եւ շատք ի պարոնաց փափաք եւ կարօտութիւն քաշելով նըւաղէին և տառապէին թէ Զերեսս նոցա տեսանեմք և զգանկատս մեր և զտառապանս մեր ծպնուցանէաք։ Արդ այժմ ո՛րպէս եղկելի եղեալ գարշելի գէշ նոցին, որ ի վերայ ծառին չինարի, կըտրատած և գլուխ ի վայր կախած և որում